

ՀԱՆԴԵՍ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԱՌ ՏԻԿՆԱՑՈՒՄ

ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ

**Գոհարս 'ի թագն ունի արքայն, ով տիկին,
Եւ սարդենեաց հիւսը՝ դիւցազն ի ճակատ.
Աստղըն ճաճանչս ի կապուտակ եթերին,
Եւ Սերովբէն՝ յանհունութեան անդ պալատ՝
Լոյս ու սպիտակ թեր, որ վառ վառ թըրթռան
Երբ նըւագէ ի զմայման :**

**Բայց քո ճակտիդ վըրայ զամեն այն բարիս
Թագաւորաց ու աստեղ շողալ տեսնեմ ես,
Եւ դիւցազունք՝ ոտքիդ սըփուն ըզդափնիս.
Հրեշտակապետն իսկ անձկանօք նայի քեղ.
Զի ձիրք մ'ունիս, կին դու, ուսկից զուրկ է ան,
Արցունք ունիս գըթութեան :**

**Եւ այս երկրիս վրայ ուր ամենքն ըսպառնան
Փայլակն յամպոց և յանդնդոց խուռն ըստուեր,
Եւ փոթորիկն որոտագոչ յՈվկէան,
Եւ մահ և ախտք և ցաւք և վիշտք և կրքեր,
Ըզեղ դըրաւ Աստուած՝ ժըպիտ ւ'անհուն լոյս,**

Լալով սրբել զարտասուս :

**Քեղ թագաւորն իր փառաց մէջ կարօտի.
Եւ մուրացիկն 'ի ծըւէնս իւր մըտախոհ.
Ըզեղ խնդրէ մրցանայաղթ պատանի,
Ու արիւնազանդ ինկած դիւցազն անդ ի հող.
Ոմանց համբոյրդ, այլոց քո կաթ ւ'արցունքներ,
Բայց ամենուն պիտի սէր :**

**Թէ խրոխտ ասպետն ըսպառազէն յասպարէղ
Թեթև փետուր 'ի գլխանոցն հողմածուփ՝
Խնդրէ քեղմէ նայուածք միայն սըրտակէղ,
Քնար զուսով կ'երթայ լուսնին 'ի լոյս սուրբ
Քերթողն, արծուի նետալար, կին՝ յերեսիդ
Տեսնեն հրեշտակ ծաղկափթիթ :**

**Երբ կը սթափիս ի քո սիրուն անըրջոց՝
Ուր սիրելոյդ հետ շրջէիր թե 'ի թե,
Ընդ հովանեաւ վարսադիտակ խիտ ծառոց,
Կամ զաւակացդ ըզհոյլ տեսնես զուարթագէմ
Անուշ անուշ խնտալ քեղի և կայտառ
Զբօսնուլ ի դաշտը դալար.**

Կամ թէ սպիտակ ճակատդ անմեղ յեղակարծ
Վըշտաց քողովըն համակուի սևաթոյը,
Եւ կամ թեսեր քո լուսեղէն, մըթընցած
Բըծաւորուին երկրիս տղմէն սևասփիւռ,
Թէ և ջընջին, այլ քանզի տիղմ է չորս դին
Եւ ոտքդ ըստէպ անդ խըրին։
Ողորմէ կին, և թող տընանկն աղօթէ.
Անով անուրջքդ աւելի սուրբ կը դառնան.
Ուրախ զըւարժ ւ'առողջ մանկտիդ կը կայտուէ.
Եւ խոցք վշտաց՝ զուարժնոց ձեռամբ մեղմանան,
Եւ թեսերէդ սրբեն ըզբիծս անդր ի բաց՝

Արցունք որբոց և այրեաց։

Ո՛հ, ողորմէ։ — Այդ մէկ գոհար քո չնչին,
Յորոց այնչափ արկղիդ մէջ կան բանդարկեալ,
Եւ որ ամենք՝ մէկ ժպտիդ քով մուժ թուին,
Մէկ քո շըզարշ, նուրբ ւ'օդեղէն ծալ ի ծալ
Զոր կը խամրէ պարն յերեկոյժ մի միակ

Իր յորձանաց մէջ արագ։

Փունջ մի ծաղկանց զոր քեզ արհեստն ընձեռէ.
Կամ քաշմիրի ճարտարահիւս ձեռակերտ,
Կամ մի մանեակ զոր ի կասպից յատակէ,
Քեզ հիւսեսցեն դարավաստակ բիւր որդեր.
Թէ աղքատին չնորհես, ոհ, որչափ ատեն

Տղաքներըն հաց կը դտնեն։

Եւ ծերն անյոյս ւ'անզօր, որ ձեռքն ի մօրուս
Գերեղմանաց քով կը քալէ անօթի.
Եւ մայրըն կոյր՝ որ ձեռքն յեցած զաւկին յոյս
Բանտերու մէջ փընտուէ ըզմիւս իւր որդի,
Եւ յիւր ծընկան վերայ զըգուէ ըզգըլուս

Արտասուելով սրտաբուխ։

Եւ պատանին զոյր աջ զինեց ամօթ վատ
Ըստուերներու մէջ թափառել գողնալով,
Եւ արդ քաւէ զոճիրն յերկաժ և ի բանտ.
Մատաղ աղջիկն ոյր մազերէն բոնելով

Աղէտք՝ նետեց ի գարշութեանց խորխորատ,

Միշտ խնտալու դատապարտ։

Եւ ապառում կենաց բիւր ցաւք մեղմանան
Քու գըթսւթեամբդ, ով կին, և լոյս կը ծագի
Մութ խըրճըթին մէջ, և յանմեղ աղջըկան
Դալկահար այտ՝ ժըպիտ ծըլի, և ուղի
Ելից դտնեն աղօթք յայրած շըրթունքներ

Զոր պղծեցին անէծքներ։

Ով, գիտնայիր անօթութիւն գիսախոխւ
Ի՞նչ ահաւոր խորհրդատու է, ի՞նչպէս
Շուրջ պաշարեալ ի ճիւաղաց նա անթիւ
Անդիտութեան և նախանձու՝ աչօք վիս
Մըզէ դտնանկն ի դիշերի տանդ առաջ
Երգիդ խառնել զիւր հառաչ։

Զի այս աշխարհ սրտմըտութեան Անմահին
Ահեղ անուրջ թըւի նոցա, և մատնեալ
Ըստուերներու, յոր գայթ ի գայթ կը Մջին
Եւ փրշերով կ'արիւնոտի նոցա քայլ,
Մինչև յօդնած իյնան ի հող. — Դու հրեշտակ,
Յօդէ սիրոյ մէկ կայլակ :

Ողորմէ . մի գուցէ անէծք աղքատին
Աւրուականաց պէս ի քո սրահս խնջոյից
Արձանանան շուրջ . մի գուցէ երկնային
Փայլատակէ ցասումն ի թերս շանթից .
Զի մուրացիկն 'ի ծռէնս, և գու ճոխազգեաց
Մէկ հայր ունիք մէկ Աստուած :

Ողորմէ կին, որ երբ հասնի ժամն ահեղ
Ուր ամեն բան թողուս աստէն, զի երկրիս
Վաղանց են ինչք, զի տընանկաց ձայն անմեղ
Զքեղ որորեն ի քարեղէն քո խըշակս .
Եւ Աստուծոյ առջև ելնես սըրբըւած
Արցունքներով թըշուառաց :

ԹՈՎՄԱՍ ԹԷՐՉԵԱՆ

ԱՔՍՈՐԱԿԱՆԱՑՆ Ի ՍԻՊԵՐԻԱ

Վ. Տ. Պ.

(Տես Երես 226 :)

Դադարեցին յայնժամ մրրիկք սպառ-
նալիցք, պարզեցան երկինք, ոչ ևս սու-
րային ընդ այն ամսէք ահարկուք, անկան
հողմք և լոեցին, և սիրտ Ափրինճերի
զուարթացաւ . իսկ պատանին հառաչէր,
զի եթող օրիորդն զբազուկ նորա և գնայր
ինքնին, առ ՚ի ցուցանել հօր իւրում զոյժ
իւր՝ յոր վստահէրն, և զկար զնալոյ ՚ի խըն-
դիր չնորհի ազատութեան նորա մինչեւ ՚ի
ծագս երկրի եթէ հարկ լինէր . Եւ ՚ի հա-
սանել նոցա ողջամբ ՚ի տուն, ֆեղորա ե-
րեցունցն ևս զիրկս արկեալ՝ օրէնէր զԱս-
տուած, և զդստրիկն սփոփէր չհոգալ զար-
տասուացն՝ զոր եհեղ վասն նորա : Յամա-
քեցոյց զկօշիկս նորա սկիւղենիս, ՚ի բաց
էառ ՚ի նմանէ զմաշկեակն, և սանդրեաց
զվարսս նորա երկայնահերս :

Այսոքիկ մայրագութ խնամք, յորս հա-
նապազօր վայելէր Ելիսաբեթ, և որովք
օրստօրէ սիրտ նորա յաւելոյր ՚ի սէր, գո-
րովէին զսիրտ պատանւոյն . և չկարէր սի-
րել զդուստրն՝ առանց սիրելոյ և զմայր
նորա, և ՚ի պսակել իւր ընդ օրիորդին՝

բարեբախտութեան իւրոյ լրումն համարէր
ունել ՚ի մայր իւր զՓեղորա :

Ի փարատել ՚ի սպառ մրրիկն և ՚ի պայ-
ծառանալ երկնից՝ և տիւն տարածամէր :
Յայնժամ առեալ Ափրինճերի զձեռանէ
պատանւոյն, տրտմութեամբ և փղըձկմամբ
՚ի հրաժեշտի կացուցանէր զնա : Գիտաց Ե-
լիսաբեթ՝ զի այն վերջին գալուստ էր պա-
տանւոյն, և խոռվեալ և կարմրերփնեալ՝
ասէ . Ոչ ևս ուրեմն գայցես այսր : Որում
պատանին ազդու իմն ետ պատասխանի .
Յորչափ ազատ եմ, և դուք աստ իցէք, ոչ
մեկնեցայց ՚ի Այսիմքայ, եկից յանապատ
այսր, եկից ՚ի գաշտ և յեղերս գետոյդ, ե-
կից ամենայն ուրեք՝ ուր մարթ իցէ ինձ
զքեզ տեսանել : Եւ յասելն զայս՝ կառեաւ,
զարմացեալ ընդ կիրս իւր և ընդ բանս .
բայց օրիորդն թէպէտե զօրութեան բանից
նորա ոչ ՚ի վերայ եկաց, սակայն ոչ ինչ
երկրայէր առնուլ պարապ յայտնելոյ նմա
զխորհուրդ իւր, և այնու վստահութեամբ
ամոքէր տրտմութիւն իւր ընդ մեկնել նո-
րա :

Ի հասանել կիւրակէի աւուր՝ Ելիսաբեթ
և մայր նորա վաղ քաջ ընդ առաւօտն
պատրաստեցան գնալ ՚ի Այսիմքա : Ափրին-
ճեր տրտմախառն ասէր նոցա ողջամբ գնալ,
զի յորմէ հետէ կային յաքսոր՝ չէր երբէք
լեալ նմա մնալ միայնակ ՚ի հիւղի անդ . այլ